Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Սովորողների բանավոր հաղորդակցական կարողությունների զարգացումը ֆրանսերենի ուսուցման գործընթացում /ավագ դպրոց/
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Փաշայան Վերգինե Տոնիկի Ֆրանսերեն լեզվի ուսուցչուհի torvan@mail.ru Ֆրանսերեն IX-XI դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ.հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց Տիգրան Մեծի 64 ecole119@mail.ru

Բովանդակություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՏԻՏՂՈՍԱԹՈՒՂԹ ---------- 1
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ---------- 2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ ---------- 4
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆՐԸ ---------- 9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ,ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ---------- 15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 16
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ----------16

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հայտնի է, որ աշխարհը բազմալեզու է: Ամեն լեզու մի ուրույն ազգի մտածողության և կուլտուրայի խտացրած պատկեր է: Այդ բազմազանությունն էլ խոչընդոտ է ստեղծում մարդկային հաղորդակցմանը: Այդ խոչընդոտը հաղթահարելու համար մարդիկ սովորում են օտար լեզուներ, ուսումնասիրում են նրանց մշակույթն ու ավանդույթները: Սովորելով օտար լեզու՝ դպրոցում նախնական պատկերացումներ են ձեռք բերվում տվյալ լեզվի, նրա առանձնահատկությունների մասին, որովհետև նա տարբերվում է իր մայրենի լեզվից: Մեր ժամանակներում շատ կարևոր է օտար լեզվի դերը, որպես հաղորդակցման միջոց: Ուսուցման սկզբնական աստիճանը բանավոր խոսքի նախապատրաստական շրջանն է, իսկ հիմնական խնդիրը բանավոր հաղորդակցումը իրականացվում է հաջորդ աստիճանում, երբ աշակերտը տիրապետում է որոշակի բառապաշարի, որը նրան հնարավորություն է տալիս կազմել կապակցված խոսք: Բանավոր խոսքը հոգեբանական բարդ պրոցես է, որն ունի երկու կողմ. ունկնդրել (ռեցեպտիվ) և խոսել (ռեպրոդուկտիվ): Բանավոր խոսքն ունի հաղորդակցման երկու կողմ՝ մենախոսություն և երկխոսություն: Ինչպե՞ս զարգացնել սովորողների բանավոր հաղորդակցումը ֆրանսերենի ուսուցման գործընթացում (ավագ դպրոց):
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Խոսքը հաղորդակցման ֆունկցիայի հիմքն է, որն իրականացվում է այս կամ այն լեզվի միջոցով: Բանավոր խոսքի զարգացման նպատակով արդյունավետ միջոցների որոնման մեջ ուսուցիչներն ավելի ու ավելի են ուշադրություն դարձնում արվեստի տարբեր տեսակների օգտագործմանը:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին. • լեզվական գրագիտություն և կարողունակություն, • սովորել սովորելու կարողունակություն, • հաղորդակցվելու և սոցիալական կարողունակություն
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Հիմնախնդրին անդրադարձել ենք «Առարկայի դասավանդման մեթոդիկա» բաժնի շրջանակներում:

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Բանավոր խոսքն ունի հաղորդակցման երկու կողմ՝ մենախոսություն և երկխոսություն: **<u>Մենախոսություն</u>** Մենախոսությունը խոսքի կազմակերպված ձև է, որը մեկ անձի խոսքն է ուղղված որևէ լսարանի: Այն խոսքի ակտիվ և ազատ ձև է, երբ խոսողն արտահատում է որևէ բովանդակություն: Մենախոսությունը լինում է նախապատրաստած, որովհետև այն պլանավորված է: Մենախուսթյան ընթացքում խոսողը ինքն է որոշում ծավալը և շարադրանքի հաջորդականությունը: Մտքերը շարադրելիս նա պետք է իմանա, թե ինչի մասին է խոսելու:

Մենախոսությունն ունի հետևյալ ֆունկցիաները.

1. ինֆորմատիվ,
2. ներգործող (համոզմունքը, միտքը հաղորդում է մեկին),
3. հուզազգացմունքային:

Մենախոսությունը կազմելիս օգտագործվում է լեզվական ծանոթ նյութ:
Մենախոսությունն ընթանում է հետևյալ փուլերով.

1. որևէ թեմայի շուրջ մեկ ավարտված միտք, արտահայտություն,
2. կարևոր է նախադասությունների մեջ եղած տրամաբանական կապը, կազմում են մի քանի նախադասություն, որոնք լրացնում են իրար միտք (ուսուցիչը հարց չի կարող տալ),
3. ծավալի գերազանցում: Աշակերտի խոսքում կան դատողություններ, որոնք ցույց են տալիս իր վերաբերմունքը տվյալ մտքի վերաբերյալ:

Մենախոսության զարգացման համար ինքս առաջարկում եմ աշակերտին դիտաֆիլ: Միաժամանակ տեսնելն ու լսելն ավելի արդյունավետ է:
Տեսաֆիլմը պետք է դրդի աշակերտին խոսել: Դրա համար կարևոր է ֆիլմի ճիշտ ընտրությունը: Ֆիլմի հետ աշխատելիս տալիս եմ առավելագույն չափով ազատություն, որ ազատ արտահայտեն իրենց դատողությունը և սեփական մտքերը:

Տեսաֆիլմը դիտելիս անհրաժեշտ պահին կարելի է այն դադարեցնել, որորվհետև հարկ կարող է լինել որևէ դրվագ 2 կամ 3 անգամ դիտել (կարևոր):

Դասարանը բաժանվում է 3 խմբի, ֆիլմը՝ ևս: Ամեն մի խումբ դիտում է իր հատվածը: Տալիս եմ ժամանակ, որ խումբը վերարտադրի իր դիտած հատվածը: Առաջին, երկրորդ, երրորդ խմբերի հատվածները պետք է տրամաբանորեն շաղկապվեն: Որպես օգնություն նախապես թերթիկի վրա գրում եմ որոշ բառեր և տալիս եմ աշակերտներին, կամ հերոսներին վերաբերվող, որոնք խթան են հանդիսանում խոսքը ճիշտ կազմելու համար: Աշակերտը սովորում է իր մտքերն արտահայտել օտար լեզվով: Մենախոսության կարողության զարգացումը կատարվում է աստիճանական բարդացմամբ:

Բնական հաղորդակցման պայմաններում մենախոսությունը՝ մաքուր ձևով՝ հազվադեպ է հանդիպում, առավել հաճախ հանդիպում է երկխոսության հետ:

<u>Երկխոսություն</u>

Երկխոսությունը, որպես հաղորդակցման ձև երկու կամ ավելի զրուցակցի միջև մտքերի փոխանակում է: Այն հիմնականում նախապատրաստված չի: Երկխոսության մեջ գործածվող լեզվական միջոցները համեմատաբար սահմանափակ են, հաճախ օգտագործվում են զեղջված նախադասության ժեստեր, դիմախաղ:

Երկխոսությունը, ի տարբերություն մենախոսության, հնարավոր չէ պլանավորել: Չենք կարող նախապես գուշակել երկխոսության հնթացքը: Եթե զրուցակիցները լավ են պատկերացնում

խոսակցության նյութը, հնարավոր է խտացված ռեպլիկների օգտագործումը՝ հակառակ դեպքում երկխոսությունը ընթանում է ավելի ընդլայնված:

Ռեպլիկը երկխոսության կարևոր բաղադրիչ մասն է: Դրանք զրուցակիցների արտահայտություններն են, զրուցակցի վերաբերմունքն են արտահայտում կամ մղում են նրան խոսելու: Ռեպլիկները կարող են կազմված լինել մեկ բառից կամ երկու ու ավել նախադասություններից: Ամենատիպականը մեկ նախադասությունից կազմված ռեպլիկներն են:

Երկխոսության մեջ օգտագործվող ռեպլիկը չպետք է կրի հարց ու պատասխանի բնույթ: Նրանց մեջ կարող են օգտագործվել հաստատական կամ ժխտական նախադասություններ, որոնք արտահայտում են՝

- զգացմունք (sais tu que… Oui c'est vrai),
- համաձայնություն (Oui, tu as raison),
- հարցում – ճշգրտում (Ou՝ est la bibliotheque. – Dans cette rue),
- հարցում – առաջարկ (Any nous allons au café. Je t'invite aussi, - Malheureusement, je ne peux pas venir).

Երկխոսության նպատակն է այս կամ այն իրադարձության շուրջ զրույց վարել: Երկխոսության ուսուցումը ճիշտ է սկսել տարբեր ռեպլիկների յուրացումից.

- առաջին փուլ – օգտագործվում են միևնույն ռեպլիկները,
- երկրորդ փուլ – զրուց վարել ըստ սխեմայի (առաջարկվում է երկխոսության թեման, ընտրվում են բանալի բառեր ու ռեպլիկներ)

- երրորդ փուլ – արագ արձագանքել զրուցակցի ռեպլիկին և կարողանալ շարունակել խոսակցությունը,
- Չորրորդ փուլ – աշակերտն ինքնուրույն վարում է երկխոսությունը:

Կարևորում եմ երկխոսությունների կիրառումը դասապրոցեսում, նաև բնական իրադրությունների վրա հիմնված երկխոսությունների կազմում (դպրոցում, բակում)

Օրինակ 1

- Allons au café.
- Pourquoi-pas.
- Je veux du café et toi.
- Moi aussi je veux du café et du jus d'orange.
- Ah! j'ai oublie, je veux encore une tartine.

Օրինակ 2

A la redaction
- Cet article est genial c'est toi qui la redige?
- Oui, monsieur Cantarel.

Օրինակ 3

Un s'cenariste et un producteur.

Օգտագործված մեթոդները, գործիքները	Հետազոտությունը իրականացրել եմ դիտման մեթոդի միջոցով, քանի որ աշխատաում եմ ավագ դասարանների՝ մասնավորապես 11-րդ դասարանի աշակերտների հետ: Այն հնարավորություն տվեց տեսնել հետազոտության բոլոր երեվույթներն ու գործընթացներն համակողմանիորեն: Երկխոսությունը զարգացնելու լավագույն միջոցներից մեկն է հանդիսանում դերային խաղերը: Դերային խաղերի նպատակն է ինչ որ բան սովորեցնել աշակերտներին, զարգացնել նրա մտավոր եւ հարց ու պատասխանի կարողությունը: Առաջարկվում են այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է աշակերտից մտավոր ջանքեր: Խաղի ընթացքում աշակերտն ակտիվացնում է իր մտածողությունը, մարզում է իր հիշողությունը: Այստեղ խնդիրը լուծվում է գործողության միջոցով, որն որոշում է աշակերտ կամքը եւ միավորում է աշակերտներին: Դերային խաղում գործողությունը ճիշտ եւ հստակ որոշված է: Դերային խաղերի բնորոշ առանձնահատկությունը ուսուցողական տարրերի կապն է խաղի տարրերի հետ: Լավ կազմակերպված խաղում աշակերտը չպետք է կասկածի, որ ինքը ինչ-որ բան է սովորում: Ողջ ընթացքում նրանք պետք է զգան, որ խաղում են եւ ոչ թե սովորում: Ամեն մի երեխայի հարազատ է խաղը եւ նա սիրով մասնակցում է դրան: Հաղորդակցումն ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար նպատակահարմար եմ գտնում ուսուցումը կազմակերպել խաղային մրցակցական իրավիճակի միջոցով:

Ցանկացած ոչ այնքան հետաքրքիր նյութ կարելի է ուսուցանել խաղային իրավիճակներով: Օգտագործում եմ փոքրիկ տեսաֆիլմեր՝ առաջադրելով խաղի կանոնները: Օրինակ՝ նախապես պատրաստում եմ ուսումնասիրվող թեմային առնչվող որևէ երկխոսության համար բառեր եւ աշակերտներն աշխատում են զույգերով՝

խաղալով դրված դերը.

- վաճառող – գնորդ
- էքսկուրսավար — զբոսաշրջիկ
- թարգմանիչ—հանդիպման մասնակից
- հյուրանոցներ—վարձով տրվող բնակարաններ:
- խմբագիր – ժուրնալիստ

Այս ամենի շուրջը ծավալվում է դերախաղ: Կարևոր է ճիշտ հոգեբանական երկխոսությունով՝ անկաշկանդ մթնոլորտ ստեղծել դասարանում, երբ որ մեկը մյուսի սխալ աերտահայտած մտքի վրա չի ծիծաղում: Խաղը լուրջ ազդեցություն է գործում մտքի զարգացման վրա: Խաղալիս երեխան սովորում է ընդհանրացնել առարկաներն ու գործողությունները, օգտագործել բառի ընդհանրացված նշանակությունը:

Դերային խաղը նպաստում է աշակերտի բանավոր հաղորդակցմանը: Դերային խաղն արդյունավետ է, եթե առաջարկվող իրավիճակները մոտ են իրականությանը: Այն ունի հստակ կառուցվածք կամ լինել ազատ: Դերային խաղի ավարտը որոշում է ուսուցիչը: Այն օտար լեզվի ուսուցումը դարձնում է հետաքրքիր:

Դերային խաղը հանդիսանում է երկխոսությունը զաերգացնելու լավագույն միջոց: Դերային խաղի նպատակն է ինչ-որ բան սովորեցնել: Այն զարգացնում է աշակերտի մտածողությունը, մարզում է հիշողությունը, զարգացնում է հարց ու պատասխանի կարողությունները: Դիմային խաղի գործողությունը ճիշտ և հստակ որոշված է նրա բնորոշ առանձնահատկության ուսուցողական տարրերի կապն է խաղի տարրերի հետ:
Աշակերտները չպետք է հասկանան, որ խաղի ժամանակ իրենք սովորում են: Մրցակցային վիճակը մեծացնում է հետաքրքրությունը բաժանված զույգերի կամ խմբերի միջոցով:

Ստեղծվում է ճիշտ հոգեբանական անկաշկանդ մթնոլորտ, երբ սխալ արտահայտած մտքի վրա ոչ ոք չի ծիծաղում:

Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության տեսակ, ունի իր յուրահատուկ հաղորդակցական խնդիրը, այն տեղեկատվություն ստանալու աղբյուր է: Այն ենթադրում է առնվազն հետևյալ հիմնական կարողությունները.

- ընդհանուր բովանդակության ընկալում.
- տեղեկատվության որոնում.
- բովանդակության ամբողջական և մանրամասն ընկալում:

Դպրոցում ուսուցման խնդիրն է լուռ ընթերցելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Բարձրաձայն ընթերցանությունը հանդես է գալիս որպես անցումային փուլ դեպի լուռ

ընթերցանություն:

Բառարանով և առանց բառարանի ընթերցելու ձևերը կախված են ընթերցանության տարբեր տեսակներից: Առանց բառարանի ընթերցումը կիրառվում է հիմնականում յուրացված լեզվական նյութի վրա կազմված տեքստեր ընթերցելիս, որոնք սովորողները կարող են հասկանալ անմիջապես:

Բառարանով ընթերցումը կիրառվում է հասարակական-քաղաքական, գիտահանրամատչելի, ինչպես նաև գեղարվեստական գրականության տեքստեր ընթերցելիս: Առանց բառարանի հասկացվող տեքստերի ընթերցումը նախատեսվում է բոլոր դասարաններում: Բառարանով՝ հասարակական-քաղաքական (լրագրային), գիտահանրամատչելի և գեղարվեստական տեքստերի ընթերցումը սկսվում է միջին դպրոցից: Ավագ դպրոցում ուսուցման ընթացքում ուշադրություն է դարձվում ընթերցվածի բովանդակության ընկալմանը:

Սովորողները պետք է կարողանան նաև լուռ կարդալ և հասկանալ ադապտացված գեղար վեստական, ինչպես նաև գիտահանրամատչելի գրականությունից ընտրված տեքստեր, որոնք կարող են պարունակել նաև անծանոթ բառեր, որոնց իմաստը հնարավոր է բացահայտել բառակազմական մոդելների հիման վրա, ինչպես նաև համատեքստում կամ մայրենի և օտար լեզուների միջև եղած բառերի նմանության հիման վրա:

Հիմնականում տարբերակվում է լուռ ընթերցանության երկու տեսակ.

ա) ընթերցանություն՝ տեղեկատվության որոնման նպատակով, որը ներառում է հետևյալ կարողությունները.

	• տեքստում փնտրել, կողմնորոշվել և գտնել հաղորդակցական խնդրին համապատասխան, որոշակի թեմային առնչվող կամ իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը. • հասկանալ տեքստի գլխավոր իմաստը և ընտրել իրեն անհրաժեշտ փաստերը (գործող անձանց անունները, իրադարձությունների տեղը, ժամանակը, պատճառը, հետևանքը և այլն). • տվյալներ հավաքել տեքստի տարբեր մասերից կամ տեղեկատվական տարբեր աղբյուրներից (ԶԼՄ-ներ, ինտերնետ, տեղեկատվական գրականություն և այլն). • տեքստից դուրս բերելով հիմնական գաղափարները և դրանք հիմնավորող փաստարկները. • համակարգել, դասակարգել տեքստից ընտրած տեղեկատվությունը, տվյալները. բ) ընթերցանություն՝ բովանդակության ամբողջական և մանրամասն ընկալման նպատակով, որը պետք է զարգացնի հետևյալ կարողությունները՝ • լիակատար ու մանրամասն հասկանալ և վերլուծել տեքստի բովանդակությունը՝ տարբերակելով գլխավոր և երկրորդական փաստերը. • հասկանալ տեքստի բառերի, առանձին նախադասությունների, հատվածների պարբերությունների միջև եղած իմաստային կապերը. • հասկանալ որևէ խնդրի հիմնավորման փաստարկները, հիմնական եզրահանգումներն ու մանրամասները. • հասկանալ և բացահայտել շարադրանքի պատճառահետևանքային կապերը.

	• զատորոշել փաստերը հեղինակի կարծիքից. • հարցեր ձևակերպել տեքստի վերաբերյալ և պատասխանել հարցերին. • զուգահեռներ անցկացնել, նկատել և գիտակցել մայրենի և օտար լեզուների նմանություններն ու տարբերությունները. • բացահայտել, վերլուծել, մեկնաբանել, թարգմանել տեքստի բովանդակությունը. • տեքստի հիման վրա սեփական եզրահանգումներ անել:

Իրականացման ժամանակահատվածը	19.08 - 19.09 2023թ.
Թիրախ խումբը և շրջանակը	Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց
/քանակ, սեռային բաշխում/	119 ավագ դպրոցի 11-րդ դասարանի 18 աշակերտ՝ 8 տղա և 10 աղջիկ:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Ավարտելով ուզում եմ նշել, որ դպրոցում դասավանդման բոլոր փուլերում՝ տարրական, միջին և ավագ, աշակերտների բանավոր խոսքի զարգացման, լեզվական կարողությունների զարգացման համար կարևոր են վերը թվարկված բոլոր մեթոդները՝ հատկապես դիտման մեթոդի կիրառումը, որը զարգացնում է սովորողների հաղորդակցական կարողությունները: Ստեղծել միջավայր, որպեսզի աշակերտը արտահայտվի: Այսպիսով հարցին, թե ինչպես զարգացնել սովորողների բանավոր հաղորդակցումը ֆրանսերենի ուսուցման գործընթացում (ավագ դպրոց) արդեն վերը նշվածից պարզ դարձավ, որ մենախոսությունը, դերային խաղը, երկխոսությունը, ընթերցանությունը նպաստում են աշակերտների մոտ ձևավորել <u>ուղղախոսություն</u> • իմանա ընտրած օտար լեզվի հնչյունների արտասանության ընդունված կանոնները: <u>բառապաշար</u> • ունենա հաղորդակցության համար անհրաժեշտ բառապաշար • իմանա քերականություն <u>հանրամշակութային գիտելիքներ</u> • իմանա ուսումնասիրվող լեզվի երկրի մասին՝ ○ հուշարձաններ ○ մշակույթի աշխարահռչակ օջախներ ○ ականավոր դեմքեր ○ ազգային ավանդույթներ
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Է. ‘Մանկավարժություն՝ Երևան 2005թ.
2. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար Երևան 2014թ.
3. ոար լեզուները Հայաստանում 2009թ.
4. Արշակյան Ա. 'Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա' Երևան
5. Կառուցողական կրթության հիմունքներ եւ մեթոդներ Երևան 2014թ.

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր	
• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	